ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2015թ. հունիսի 17 թիվ 65 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Բաժնետիրական ընկերությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի հունիսի 10-ի թիվ 01/85/14697-15 գրությունը

որոշում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2014 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ընկերությունների տնօրեններին սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200366 հաշվին:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2015 թվականի հունիսի 17-ի

թիվ 65- Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	Ընկերության անվանումը	2014թ տարեկան արդյունքներով առաջացած զուտ շահույթը /ՀՀ դրամ/	ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափը /ՀՀ դրամ/	կուտակման հիմնադրամի ստեղծում /ՀՀ դրամ/
1.	«Աշտարակի ԲԿ» ՓԲԸ	3,845,300.00	1,922,650.00	1,922,650.00
2.	«Ապարանի ԲԿ» ՓԲԸ	1,691,000.00	845,500.00	845,500.00
3.	«Թալինի ԲԿ» ՓԲԸ	8,703,100.00	4,351,550.00	4,351,550.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	14,239,400.00	7,119,700.00	7,119,700.00

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ